

# Մ Ա Յ Ի Ս 28

Երեք տարիներ միայն կը բաժնեն 1918ը՝ 1915էն, Հրաշտիառ Յարութիւնը՝ ցեղասպանութեան եւ աքսորի մասը օրերէն: Պատմութիւնը արձանագրած է այս իրողութիւնը՝ իբրեւ մէկը այն դժուար բացատրելի երեւոյթներէն՝ որոնք սրտմտական հրաշքներ կրնան նկատուիլ: Պատմական հրաշք մը՝ որու գաղտնիքը հայ ժողովուրդին միայն ծանօթ է: Կեանքին ու լոյսին ձգտող, Կեանքին ու լոյսին համար կռուիլ եւ մեռնիլ գիտցող այս ժողովուրդին:

1918ի Մայիսեան հրաշքը հասարակաց թշնամիին դիմաց հայ ժողովուրդի մէկ մարդու նման ծառանալուն մէջ կը կայանայ. հայ ժողովուրդի միասնականութեան, ազգային դոյատեւման հաւաքական կամօքի միահամուռ արտայայտութեան մէջ է անոր գաղտնիքը: Գերազոյն վտանգի ամբողջական դիտակցութիւնն էր որ մարտի դաշտ իջնցուց հայութիւնը՝ իր ամբողջութեան մէջ, որ օրհասական դուպարին մէջ նետեց բոլորը անխտիր՝ արեւմտահայ թէ արեւելահայ, գինուոր թէ քաղաքացի, երիտասարդ թէ ծերունի, կին թէ երեխայ: Կեանքի եւ մահուան օրհասական դուպար՝ որ սակայն, Սարգարապատի, Բաշ Աբարանի եւ Ղարաքիլիսէի դիւցազնադաշտերուն վրայ, գերբնական հերոսամարտի մը վերածուեցաւ, կասեցնելով թշնամի կազմակերպուած բանակներուն յառաջխաղացքը, եւ աւելին՝ պարտութեան մատնելով զանոնք:

Բայց Մայիս 28ի խորհուրդը դուրս կու գայ հերոսամարտի մը եւ յաղթանակի մը ընթացիկ ոգեկոչումէն: Կը նոյնանայ ան Հայոց Պատմութեան աղամանդեայ շղթային հետ, որմէ դարերու հոսանքին հետ՝ ազատ ու անկախ ապրելու սրբազան գինովութիւնը կ'արտացոլայ, իբրեւ ամենաշքիղ օղակներէն մէկը անոր:

Ազատութեան եւ Անկախութեան տօնն է Մայիս 28ը: Ազատութիւն եւ անկախութիւն՝ որոնք դարբնուեցան Սարգարապատով, Բաշ Աբարանով ու Ղարաքիլիսէով, ծնունդ առին Հայոց Ազգային Խորհուրդի յայտարարութեամբ եւ

մարմին ստացան Հայաստանի Հանրապետութեամբ: Դարերու դերութենէն ետք, հայ ժողովուրդը, անսակարկ կերպով թափուած իր արեան դնով, վերստին ձեռք կը բերէր իր կորսնցուցած սեփական հայրենիքն ու քաղաքական անկախութիւնը:

Ազատ ու անկախ ապրելու հայ ժողովուրդի բնածին ձգտումի արտայայտութեան տօնն է Մայիս 28ը: Տօն է մի հերոսական մարտնչումի եւ դիտակցական նահատակութեան՝ ի խնդիր սեփական, անկաշկանդ դոյութեան: Տօն է ազգային հպարտանքի:

Ժողովուրդները չեն մեռնիր ազատութեան եւ անկախութեան իրենց ձգտումին, ազատութեան եւ անկախութեան ի խնդիր իրենց մղած պայքարին հետեւանքով: Կը մեռնին անոնք՝ երբ այդ ձգտումը կը դադրի իրենց մէջ:

Ժիշդ է, կարճատեւ եղաւ Հայաստանի Հանրապետութեան կեանքը, ու դժուարութիւններով լեցուն: Կարճատեւ եղան անկախութիւնն ու ազատութիւնը: Սակայն դարերու սարկութենէն վերկուեցաւ Հայաստանը, որ դարերուն կ'ընայի հպարտ, բարձրաճակատ:

Չկայ այսօր Հայաստանի Հանրապետութիւնը, որպէս ազատ եւ անկախ պետութիւն: Կայ Սակայն Հայաստանը՝ իր պետական կառոյցով, սեփական դիմադծով, ազգով, հողով, մշակութային եւ քաղաքակրթական նուաճումներով: Եւ կայ դարերուն համար:

Չէ իրադործուած Սեւրը տակաւին: Պատմութեան ճիւղաններէն խլուած փաստաթուղթ է ան սակայն, որու իրականացման հետամուտ է ամէն մէկ հայ, ուր ալ որ դանուի ան, արտայայտուի կամ ոչ:

Մայիս 28ը, իր բազմակողմանի խորհուրդով, ամկիւնտդարձ թուական է Հայոց Պատմութեան մէջ:

Հատուած մը Լ. Յ. Դ. Բիւրոյի 1968ի կոչեմ,  
հրատարակուած Մայիս 28 Յիսմամբակիմ առթիւ